ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2013թ. թիվ 143-Ա

ԱՆԴՐԱՆԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 2-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի դատախազության 24.08.2013թ. թիվ 62/22քգ-13 միջնորդագիրը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Մինչև թիվ 19121312 քր.գործի ընթացքի վերջնական լուծումը ժամանակավորապես դադարեցնել «ՀՀ Լոռու մարզի Արջուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Անդրանիկ Սողոմոնյանի պաշտոնավարությունը:

2. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին՝

1) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59 հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել Ա.Սողոմոնյանին պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

2) Սույն որոշման մասին տեղեկացնել նաև ՀՀ Լոռու մարզի դատախազ Հ.Ղարախանյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. օգոստոսի 28
ք.Վանաձոր